

S - 51

ԱՐԵՒԵԼ ՏԵՐ-ՌՈՒԻՔԻՆԵԱՆ

Գալուստ

ԼԵՒՈՆ ՇԱՆԹ, ՆՐԱ ԵՐԿԵՐՆ  
ԵՒ  
„ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՈՆԵՐ“  
ԴՐԱՄԱՆ



ԼԵՒՈՆ ՇԱՆԹ (Սեղբոսկան)

Թ Ի Փ Լ ի ջ

Էլեմերտար. օր. Խ. Աղանիսանի, Պուլց. 7.

1913

891.99.092

Հ - 305

# ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆ Լ. ՀԱՆԹԻ ՄԱՍԻՆ,

Լոյս տեսած մինչեւ 1913 թ. ապրիլի 18-ը.

1) Գ. եղիլեան—«Հին Աստուածներ» Շանթի, եջմիածին, 1913 թ. գինը 15 կոպ.

2) Գ. Տէր-Պօղոսիան—Ստեփանոս Պատմիչը և Շանթի «Հին Աստուածները». 1913 թ. Շուշի.

3) «Հորիզոն» թերթի 1913 թ. հետեւել № կան յօդուածներ, նույրված Շանթին և նրա երկերին. 22, 28, 29, 38, 40, 47, 55, 56, 59, 60, 61. Զամալեանի յօդուածները՝ № 26, 30, 32, 52. Ա. Ղազարեանի՝ 13, 15, 20, 43. Աղբալեանի՝ 27, 44.

4) «Մշակ»-ի 1913 թ. հետեւել № 10, 11, 12 (Առողիաթեան) 13, 15, 16 (Քալանթար) 27, 28, 29 (Առ. Մալիսսեանց) 32, 39 (տիկ. Ֆ. Վարդանիան) 41, 49, 53, 68...

5) «Բագուի Զայն» 1913 թ. № 36, 46, 47, 48, 49, 50...

6) «Հովհան»-ի 1913 թ. № 4, 5, 10, 11, 12, 13:

7) «Եակ» 1913 թ. № 36, 59...

8) «Յուշարար» 1913 թ. № 4.

9) «Նոր Հոսանք» 1913 թ. № 1.

Դաւառական և արտասահմանեան հայ մամուլի Շանթի երկերին նույրած հատուածները չկարողացանք ժողովել՝ ժամանակի սղութեան պատճառով։

Լ. ՇԱԿԵԹԻ և մասնաւորապէս «Հին ԱՍՏՈՒԱԾՆԵՐԻ» մասին մինչև Զատիկի տեղի ունեցած հրապարակային հաւաքոյթները և ներկայացումները։

Թիֆլիսում—Արմենեանի դերասանական խումբը 6 անդամ՝ ներկայացրել է «Հին Աստուածները» (14 յունվարի—14 փետրվարի). 3 անդամ՝ Բագուի Զարիֆեանի խումբը—9 անդամ։

Բագվում—Զարիֆեանի դեր. խումբը՝ 5 անդամ, Արմենեանինը՝ 2—7 անդամ։

Զարիֆեանի խումբը՝ «Հին Աստուածները» ներ-

891. 99. 092

2-30s

1-2

104 OCT 2010




Լևոն Շահր (Սելլոսեան)



the individual. The other is to determine the specific needs of each person, to determine what kind of support is needed, and to provide that support.

ՅԱՌԱՋԱՐԱՆԻ ՏԵՂ

Այն չը տեսնած հետաքրքրութիւննը, որ առաջացրել է Լ. Շանքի «Հին Աստվածներ» դրաման հայ մշակուականութեան զանազան խաւերի մէջ, մի վերին աստիճանի բնորու երեւոյք է, որ անուուե կապ ունի մեր հասարակական տրամադրութեան փոփոխութեան հետ։ Ի հարկէ պատահական բան չէ այն, որ ոչ միայն մեր մշակու կենդրաններում, Թիֆլիսում, Բագրում, Կ. Պօլսում, այլ և զաւառական բաղակներում տեղի ունեցան կենդրանի գրոյցներ և վիճաբանութիւններ այդ պիեսի եռութեան և նօանակութեան մասին։ Արդէն մի ընդարձակ բնակդասական գրականութիւն է ստեղծվել, որ փորձում է բացատրել «Հին Աստվածների» առաւելութիւններն ու թերութիւնները և ցոյց տալ նրա տելլը մեր և մասամբ էլ համաշխարհային գրական կեանքի մէջ։ Այդ տեսակ փորձերից է և ներկայ աշխատութիւնը, որ պատկանում է սկսնակ գրչին և՝ յաւակնութիւնն չունենալով խնդրի բազմակողմանի ուսումնասիրութիւնն ու բոլոր վիճեղի հարցերի բննութիւնը ներկայացնելու, ձգտում է մի ամփոփ գաղափար տալ Շանքի գրական գործունեութեան մասին՝ ընդհանրապէս և «Հին Աստվածների» մասին՝ առաւելապէս։ Կրանք, որոնք առհասարակ իիչ են ծանօթ մեր բանաստեղծի երկերի հետ, այսեղ կը գտնեն նրա ստեղծագործութեան զարգացման գրերէ



4862-2010

ամբողջական պատկերացումը։ Ուշունելով նախկին ա-  
շակերտիս այս առաջին հայլը քննադատութեան աս-  
պարեզում՝ ես յոյս ունիմ, որ եւ լճքեցողների կող-  
մից այս շարադրութիւնը կարծանանայ հաջալերութեան  
եւ զերմագին խրախուսակի։

### ՍՏԱԼԻՆԻՑԵԱՆ ՌԱՍՈՒԵՀ ՆԵՐՍԻՒԵԱՆ ՊԱՐԱՆՈՂԻ

18 ապրիլ 1913 թ.  
Թիֆլիս



### ՆԵՐԱԾՈՒԹՅԻՒՆ

Վերջին չորս ամիսների ընթացքում կովկասանայ մտաւորականութեան հետաքրքրութիւնը գամուած էր կուն Շանթի և նրա նոր ողբերգութեան՝ «Հին Աստուածների» շուրջը։ Մի գրանդիօզ և մինչև այժմ մեզ մօտ չը տեսնուած մտքերու շարժում առաջ բերեց։ Լ. Շանթ, տալով մեր ձեռքը վեց տարի առաջ գրուած իւր գրաման, մեր մամուլը շատ զբաղուեց և շարունակում է զբաղուել «Հին Աստուածներով», ամեն տեղ կազմակերպուեցին դասախոսութիւններ, գրական դատեր և գեկուցումներ այս գրամայի մասին, Թիֆլիսում և Բագվամ 15 ներկայացում ունեցաւ, ուսւներէն թարգմանուեց գիրքը, և, ինչպէս խօսում են, գալող աշնանը խաղացուելու է մայրաքաղաքի բեմերի վրայ։ «Հին Աստուածների» երեան գալը և առաջ բերած հետաքրքրութիւնը կարելի է նմանեցնել մի քարաժայոփ, որ ուժգործն ճահիճն է ընկնում և տակն ու վրայ է անում ջուրն ու տիղմը։ Հայ մտաւորականութեան հետաքրքրութիւնը այս վերջին ամիսներում մի ուժեղ մտապտոյտ էր, որ դառնում էր և Շանթի և նրա գրամայի շուրջը։ (Ար. կ...ն<sup>1)</sup>). էլ գաւառուկան կենդրոններ

<sup>1)</sup> Կարսում և գաւառում կարդացուած բանախօսութիւններ, որոնք նպատակ ունին միայն ծանօթացնել լսողին Շանթի գործերին։

ևն, այստեղ կան հայ մտաւորականներ և գրականութեամբ հետաքրքրուղներ՝ հասկանալի է, որ այստեղ էլ ցանկանան մօտէն ծանօթանալ է. Շանթին և նրա դրամային և այդպիսով բացառութիւն չը կազմեն համատարած հայ գրական շարժումից:

Մի որևէ հեղինակ՝ նրա գործերը լաւ հասկանալու համար պէտք է ի՞նկանի ունենալ այն պայմանները, որոնց արդիքնքն է ինքը հեղինակը և նրա ստեղծագործութիւնը Յայտնի քննադատ և մտածող իպազօլիտ Տէն, որին սովորաբար գեղարտեստական գրական երկի օրէնսդիր են անուանում, երեք պայման է՝ դնում ցեղի, միջավայրի և ժամանակի ուսումնասիրութիւնը Որպէսդի Ելլէբի գրուածքները լաւ հասկանանք, պէտք է Դերման ցեղը ճանաչենք, Դերմանիայի ճնութիւնը, միջավայրը ուսումնասիրենք և 18-րդ դարի վերջը և 19-րդի սկիզբը աչքի անցկացնենք. Շանթի գրուածքները հասկանալու համար պէտք է հայ ազգի, Կ. Պոլսի և Կովկասի միջավայրերին ծանօթ լինենք. և մերջին 20—25 տարուայ ժամանակաշրջանը ի նկատ առնենք.

Դարերի ճնշումի տակ կենդանի հայ ազգը, իրարյաջորդող քաղաքական դժոնդակ պայմանների միջից հերոսաբար դուրս եկող հայերն են այն ցեղը, որից սերուել է լ. Շանթի: Անկախութիւնից զուրկ այդ ազգը այժմ հպարտանում է իւրա անցեալով և բաժանվում է մասերի. արհեստական սահմաններն են. Արան կտրատել: Այս հանգամանքը շատ կարևոր է ի նկատի ունենալ լ. Շանթի գործունէութեան մասին խօսելիս, նա գիտակցել է իւր հայրենիքի կտրատուած լինելը և իւր գրուածքներով ծառայել է որպէս շաղկապ բաժանուած մասերի, ինչպէս կը տեսնենք: Հայերն են Շանթի վէպերի բոլոր հերոսները. հայերն են նրա դրամաների գործող անձինք. հայի հոգեբանութիւնն է, որ այնպէս

ճշտօրէն դրսեորել է Շանթ իւր երկերում: Միջավայրը, ուր ապրել է լ. Շանթ և ստեղծագործել, մէկը չէ. նա եղել է Պօլսում: և Կովկասում, սկզբնական գրուածքների՝ «Լեռան աղջկայ», «Երազօքերի», «Դարձի», ինչպէս և նոր գրամայի՝ «Հին Աստուածների», գործողութեան վայրը՝ Կովկասն է՝ Դիլիջանը և Սևանը: Իսկ միւս գրուածքների՝ «Վերժինի», «Եսի մարդու», «Դուրսնեցիների» և «Ճանբուն» վրայի վայրը՝ կ. Պոլսը՝ Եջմիածնինը, Դիլիջանի անտառներով գանգուր լինենքը, Սևանի ծովակը, կղզին, Բոսփորի նեղուցը, Մարմարայ ծովը՝ ունկելջիւրը՝ ահա սրանք են: այն միջավայրը, ուր ապրել է Շանթ և ստեղծագործել իւր երկերը՝ Վերջին 20—25 տարիներն են այն մօմենտը, երբ Շանթ գրել է իւր գրքերը և խորապէս ազգուել է այդ շրջանի հասարակական և գրական մտահոնանքներով: 1895 և յետակայ տարիների սարսափները, որ տեղի ունեցան Տաճկահայաստանում, հայկական գալտնի յեղափոխական կազմակերպութիւններն և այլ պատմական երևոյթներ, որոնք կատարուել են վերջին քառորդ դարի ընթացքում, ազգել են Շանթի ստեղծագործութեանը, արտադրելով «Եսի մարդը» և «Ճանբուն» վրայա: Շանթ ուսել է Գերմանիայում և մօտիկից ուսումնասիրել է եւրոպական գրական նոր ուղղութիւնները, գլխաւորապէս Սիմվոլիզմ, որից և մեծապէս օգտուել է իւր «Հին Աստուածների»: մէջ:

Բայց լ. Շանթ ինքնուրոյն հեղինակ է. նրա ինտելեկտը սովոր չէ ուրիշի բերանից խօսելու, սովորական շաբանների շուրջը պատուելու: և նրանցով իւր երկերը զարդարելու: Այստեղ մենք մտնում ենք հեղինակի անհատականութեան շրջանը, որ պակասում է Տէնի որէնմղրուաթեան մէջ: Շանթի անհատականութիւնն է:

քի ծանօթութիւնը՝ դիւրութիւններ կուտայ, մեղ նրա երկերը հասկանալու:

Հետոն Սեղբոսեմն, այսպէս է Շանթի իսկական ազգանունը, Կ. Պոլսիցի է. միջնակարգ կրթութիւնը ստացել Ա. Էջմիածնի Գէորգեան ճեմարանում, վեց տարի ուսել է Գերմանական համալսարաններում, գլուխաւորապէս Միւնիենում և Հայպցիգում ընկերական գիտութիւնները։ Ուսանողական շրջանից էլ Շանթ սկսում է իւր գրական գործունէութիւնը, նույիրելով իրեն զուտ գեղարուեստական գրականութեան։ ուսանաւորներ է գրում և ուղարկում է Արաւախանեանի հիմնած «Մուրճի» մէջ զետեղելու։ Գերմանիայից գալիս է Կովկաս, ուսուցչութիւն է անում Երևանի թեմական դպրոցում, ապա գալիս է Ներսիսեան դպրոցը և 1907—8 թուին ընդհանուր պատմութեան և Հայոց նոր լեզուի դասեր է տալիս բարձր գասարաններում։ զրանից յետոյ կրկին գնացել է Երևան, այնտեղից մեկնել է արտասահման և այժմս գտնվում է Կ. Պոլսում; ուր կենցրոնական Վարժարանում ուսուցիչ է Ամուսնացած է, ունի երեխաներ։

Այսպիսով Լ. Շանթ 45 տարեկանին մօտ ուսուցիչ է։ Հայ ուսուցչութիւնը հապարտութեամբ կարող է ցոյց տալ Լ. Սեղբոսեանին, նրա աշակերտները, որոնց թուին պատկանում եմ և ես, մի առանձին սիրով են յիշում իրենց ուսուցչի հետ անցկացրած ժամերը և նրա հանդարտ, համոզիչ և անկեղծ խօսակցութիւնը։ Աշակերտներս նրան էինք տալիս մեր պատանեկան գրուածքները կարդալու, գնահատումն և սրբագրումը ստանալու։ Լ. Շանթ նուիրուած ուսուցիչ է, իւր նկարագրած Բագրատի պէս («Դուրսեցիներ»), նա ինտելիգենտ է ոտքից մինչև գլուխ և իւր նկարագրած մարդիկն էլ նոյն խմբին են պատկանում (նրա վէպերի

և թատերական գրուածքների բոլոր հերոսները հայ մտաւորականներ են՝ ուսուցիչներ, բժիշկներ, նկարիչներ, յեղափոխականներ, զարգացած վարդապետացուներ և վանականներ։ Շանթ տուել է հայ մտաւորականութեան կեանքի առանձին առանձին դէպքերի ֆիշտ պատկերը, յաճախ նկարել է իւր ընկերներին, ինքն իրեն ժողովրդի այլ դասակարգերը չեն երևում Շանթի գրուածքներում։ Դա չէ նկարագրում զիւղացիութիւնը իւր անծայր պէտքերով, չէ շօշափում շահագործուած և իւր դասակարգային գիտակցութիւնից զուրկ բանւորութիւնը, բայց Շանթ չէ գրել և բուրժուազիայի մասին, նրա այլասիւրուած հակումներով։ Շանթին հետաքըրքը և գրուածքների հերոսները հայ մտաւորականներ են, մտաւոր զարգացում ունեցող մարդիկ։ Այսպիսով Շանթ ներկայանում է մեղ որպէս դասակարգային գրող, հայ մտաւորականութեան երգիչ<sup>1)</sup>։ Նա երգել է հայ մտաւորականի զգայական սէրը իւր ապարբեր ձևերով և գաղափարական ձգտումների ելեէջը։ Շանթի հերոսները և հերոսուհիները ընդհանրապէս բոլորը կոյս հոգիներ են և գրուածքի մէջ առաջին անգամ բռնկվում են սիրոյ զգացումով՝ Շանթ հոգեբանական նրբութեամբ նկարել է առաջին բռնկումը և սիրոյ բնորոշ կողմերը։ մենք մի քիչ յետոյ կը ծանօթանանք Շանթի գրուածքներին և համառուտակի կը պատմենք սիրային հանգոյցները<sup>2)</sup>։ Առաջին ուժեղ

1) Խչմէ է այդպէս, ինչմէ Շանթ նկարել է միայն մի հատուածը ժողովրդի, ինչմէ միակողմանի է նրա գրիչը. սրանք շատ հետաքըրքիր հարցեր են, բայց այստեղ տեղը չէ դրանց մասին խօսելը. այդ հարցին ես նուիրել եմ մի յատուկ շարադրութիւն։

2) «Սէրը Շանթի երկերում» վերնագրով կարելի է մի հետաքըրքիր ուսոււմնասիրութիւն կատարել.

սէրը և գաղափարական ձգտութեմները՝ Շանթը երգել է գիղեցիկ լեզուով, որ խանութիդ, և հիանալի խառնուրդ է արևմտեան և արևելեան բարբառների։ Պօլսում ծընւած և էջմիանում դաստիարակուած Շանթը վարպետորէն օգտուել է անջատուած համեւածների բարբառներով և իւր գրուածքներով մի միեծքար է դրել հանուր հայկական բարբառի ստեծմանը։ Սահուն, պարզ ոճով Շանթը թէ պօլսահային թէ կովկասահային տալիս է ընթերցանութեան հաճելի երեսները լեզուն պատկերաւոր դարձուածներով։ Ճնա թուխս էր նստել իւր մաքերուն վրայց, «արեը հորիզոնին կը քուեք», «արեը մայրը կմտնէք»։ Խոշոր, ամեհի ոսկի մը կարծես ընութիւնը ծանր-ծանր ու դժուար կը մղէք իւր գանձանակը... և այլ բազմաթիւ այլարանութիւններով ու պատկերաւոր ոճերով Շանթ համեմել է իւր գեղեցիկ լեզուն ։ Բայց մանուածապատ չէ Շանթի լեզուն, ինչպէս սովորաբար ընդունուած է համարել այլարանութիւններով և պատկերաւոր ոճերով լի բարբառը։ Շանթի լեզուն վճիռ է; յստակ և պարզ, չունի ծանր և դժուարամարս նախադասութիւններ, անգործածական և օտար բառեր, մաքուր լեզու է և ըստ առենայնի արժանի ընդօրինակութեան։

## „Լեռն Սղակւկը“, „ԵՐԱԶ ՕՐԵՐ“ , „ԴԱՐ- ՅԸ“ եւ ԵՐԳԵՐԸ.

Հ. Շանթի առաջին գործը «Լեռն աղջիկն» է, որ տպուեց 1892 թ. «Տարագում» և ապա մի քանի հրատարակութեամբ լոյս տեսաւ։ Սա մի գողարիկ քնարերգական պօէմ է, որի մէջ հեղինակը ինքն իրին է դուրս բերել իրեն երգել։ Առհասարակ Շանթը սուբյեկտի հեղինակ է, նրա սուբյեկտն է, որն երեսում է թէ «Լեռն աղջկայ» և թէ յետագայ գրուածքների՝ և երազ օրերի» և միւսների մէջ «Շանթի քնարերգութիւնը օժտուած է քաղցրահնչիւն ճոխ լեզուով և հարուստ պատկերներով»։ «Լեռն աղջկայ» շարահիւսութիւնը և սիւժէն շատ հասարակ է և պարզ։ Հեղինակը, գիշերօթիկ դպրոցի ուսանող, ընկերների հետ ամարային արձակուրդներին շրջում են հայաբնակ գաւառները, նրանք կանգ են առնում Գեղարդայ վանքում, ուր մի քանի շաբաթ ապրելուց և շըջակայքին ծանօթանալուց յետոյ՝ ձանձրանում են և բարձրանում դէպի սարերը, եայլաները։ Սարերում երկար չեն մընում։ Հեղինակը ուշադրութիւն է դարձնում տան տիրոջ աղջկայ վրայ, որին և սիրահարվում է։ Նրանք մըտերմանում են իրար, բայց (փոխադարձ յարաբերութիւնները դուրս չեն գալիս միամիտ, պլատօնական սիրոյ շրջանակից) մօտենում է սեպտեմբերը, և հեղի-

նակը ստիպուած է բաժանուել աղջկանից. վերադառնալով գիշերօթիկ զպրոցը, նա յաճախ յիշում է ամառուայ կեանքը և լեռան աղջկան. Այս լիրիքական մի հոյակապ պօէմ է, որ ունի գեղարուեստական հիասքանչ կտորներ. ահա լեռների և բնութեան նուիրուած տողերը.

Լեռներ, սէգ լեռներ, ես կը սիրեմ ձեզ,  
կը սիրեմ բուռն ու անզուսազ սիրով.

Հպարտ գագաթնիդ՝ հսկաներ կարծես՝  
Ուժ կը ներշնչեն թարմութիւն, կորով...

Լեռներ, վեհ լեռներ, ձեզ երգել կուզեմ  
Ոգերութեան այս տենդերուս մէջ.

Թող ձեր ճակատը միշտ բաց, միշտ վըսեմ  
Դաւնա գործերուս իդէալն անշէջ:

Դնւ, լեռան աղջիկ, երգել կուզեմ քեզ  
Եւ թող երգիս հետ դուրս թափի կրծքէս

Հոն երկար ատեն ծածկուած անյուշ  
Թոթիւը սրտիս, յոյզերը անուշ:

Եւ, երնէկ, երգն ալ պարզ ըլլա, յըստակ,  
Ինչպէս ամեն բան լեռներու վրայ.

Ինչպէս ալբուրը, որ դուրս կը ծորա  
Մամոսա ժայռերու զով խոռոչին տակ,

Ինչպէս լեռնային երկինքը վըճիտ,  
Ինչպէս, լեռան կհյս, թնդիւնը լանջիդ:

Ահա այն բերկրանքի արտայայտութիւնը, որ հեղինակը ունենում է բնութիւնը զգալով

Օհ, որքան քաղցր է ձմբան բանդէն վերջ  
Բնութեան գիրկը խննթի պէս նետուիլ.

Ու խորհղաւոր, սիրուն ձորին մէջ  
Եւ սքանչանալ և ոգեսրուիլ...

Կարելի է բերել այսպիսի տասնեակ գեղեցիկ  
հատուածներ. Ուրեմն՝ մի հանդիպումն է նկարագրուած

այս պօէմի մէջ. Գիշերօթիկ աշակերտը լեռների վրայ  
պատահում է մի աղջկայ. սիրահարում են; վերջը բա-  
ժանվում է մի հանդիպումն բերուած  
է և «Երազ օրեր» վէպի մէջ: Յուշատեարի ձեռվ  
դրուած այս պատմուածքում նկարագրուած է ամարա-  
նոցում Դիլիջանում Երուանդի անցկացրած ամիսները».

այստեղ Երուանդի կուսական սիրտը առաջին անգամ  
բռնկվում է սիրոյ տենչով: Նա հասդիպում է գիմնա-  
զիօնի վերջնթեր դպասրանի մի աշակերտուհու, Վար-  
դուհուն. նրանք մօտենում են իրար, որպէս ազգակից  
սրտեր: (Վարդուհին) էլ ընտանիքով եկել է Դիլիջան.

Նրա եղբայրը նկարիչ է և քրոջ պէս լաւ չգիտէ հա-  
յերէն: Երուանդ հայերէնի դասեր է տալիս աղջկան.  
պարապմունքի այդ ժամերը երջանկութեան և մեծա-  
պոյն հաճոյքի ժամերն են երկուսի համար էլ Պարտի-  
զում նրանք բացվում են իրար, համբուրզում են, սի-  
րոյ դաշն են կապումքայց ստեղծվում են հոգեբանա-  
կան հանգոյցներ: (Երուանդ դադարում է) Վարդուհու  
հետ պարապելուց, օրերով չեն տեսնվում» Երուանդ  
երկար չէ կարող համբերել և գնում է աղջկայ մօտ-

բայց այժմս էլ Վարդուհին է սառել. վիրաւորուել է  
տղայի վարմունքից: Նրանց ընտանիքները գնում են  
Սևսն՝ ուխտի. այստեղ Երուանդ և Վարդուհի նորից  
մօտենում են. գեղջուկ գեղջկուհիների պարը, բնու-  
թեան գեղեցկութիւնը, վերջալոյսի հիասքանչ տեսա-  
րանը յուղում են նրանց և հաշտեցնում: (Մօտենում է  
ուսումնական տարին. Երուանդ և Վարդուհի պայմա-  
նաւորվում են իրար հետ նամակագրութիւն ունենալ,  
և ապա՝ մի տարի յետոյ միասին կը գնան շարունակե-  
նակելու. Երուանդ կընտրէ ընկերական գիտութիւննե-  
րը, իսկ Վարդուհի՝ մանկավարժութիւն: )Այս ծրագըր-  
ներով և բաժանվում են: Երուանդ նամակներ է գրում

Վարդուհուն՝ բայց պատասխան չէ պատճեռմ նրանից, նկարիչ եղբայրը միայն նամակով յայտնում է տղային, որ իզուր նեղութիւն չը կրէ քրոջը նամակներ գրելու, որովհետև քոյթը արդէն համոզուել է, որ երկուակի միջն եղած կապը չէ կարող շարունակուել. Երւանդ դեռ երիտասարդ է, ապագան անորոշ, իսկ քոյթը արդէն չափահամ է և չէ կարող սպասել, մինչև տղայի պայմանները թոյլ կը տան նրա հետ կապուելու: Եղբայրը խնդրում է երուանդին՝ մուսանալ ամառային արկածը, որ յատուկ է բոլոր երիտասարդներին: Տղայի համար չափագանց ծանր է լինում այս նորութիւնը. նա հիւանդանում է և մի շաբաթի չափ հիւանդանոցում պարկում: (Այդպիսով առաջին սէրը պարդիւն է անցնում. երած օրեր են թվում նրան աղջկայ հետ անցկացրած ժամերը:)

(Այս պատմուածքին իր բովանդակութեամբ մօտ է «Դարձ» անունով վէպը: Կերջին վէպում հանդէս են բերուած մի շարք պայմաններ, որոնք յիշեցնում են չէին Աստուածները: ) Այս դրաման հասկանալու համար պէտք է մի փոքր երկար կանգ առնենք «Դարձի» վրայ:

Հիայց մինչև այդ, կս կուզեմ ձեր ուշադրութիւնը հրաւիրել Շանթի ուտանաւորների վրայ, որոնք առանձին գրեոյկով լոյս են տեսել «Երգեր» վերնադրով: Շանթը բացի շնորհալի վիպասան և տաղանդաւոր դրամատուրգ լինելուց, նաև յաջող բանաստեղծ է և ամենից առաջ քնարերգու, որ իր գեղեցիկ ոճով այս կամ այն տրամադրութիւնն է արտայայտել Հետևեալ սաւանտորը շատ նշանակալից է Շանթի գրուածքների ոգին հասկանալու համար.

Երնէկ շիթ մը լինիմ ցողի՝  
Կաթիմ կուրծքը թոշնած ծաղկին.


Թարմութեամբս իմ կենսալի և Ա աշխարհի Վայրկեան մըն ալ տամ իր կեանքին. Կամ թէ ուր է, որ ես դառնամ մը յորդու Սաք արցունքի պոռտկում մը յորդու մը Ու սասոյցի կոյտը բառնամ վշտոտ կուրծքէն յուսակարօտ. Միայն, երկինք, գէթ մի անգամ.

Էլութեամբս ես պէտքի գամ: Երնէկ լինիմ սիւք քաղցրաշունչ Դէպ երազող զոյգը վազեմ եւ կուսական մազէն մի փունջ Տղու տարփոտ դէմքին ցանկման մաս Կամ թէ դառնամ փոթորկու հով Ու խորտակեմ բիրդն այն հսկայ: Որ լեռներու ծայրն անդանով Տկարին դէմ կը յոխորդայ:

Միայն, երկինք, գէթ մի անգամ Այս կեանքին մէջ ես պէտքի գամ: Երնէկ լինիմ երազ անուշ, կուսանցին ներս սրալրդիմ Ու տամ փունջ-փունջ յոյզեր քնրուց կեանք երազող անկեանք սրտին: Եւ կամ ուր է, որ երկնային Տեսիլ դառնամ բերթողին դէմ, Պատում քոյլ ապագային Նոր ներշնչում իրեն ազդմ.

Ու կեանքին մէջ գէթ այս անգամ Պէտքի գալըս սըրաէս ըզգամ:

Իր գրուածքներով Շանթ այս ուտանաւորի մէջ յայտնած ցանկութիւնն է իրագործել. նա նկարսկրել է երազող զոյգեր, փունջ-փունջ յոյզեր է տուել և կեանք երսազող անկեանք սրտին, պատուի է «Դարձի» ներու



Սիրաքհանի և «Հին Աստուածների» արեղայի ապագայի քօղը և նոր ներշնչումներ է առևել նրանց. Բայց մի ցանկութիւնը Շանթ դեռ չէ իրագործել. «Լեռներուն ծայրն ապահով տկարին դէմ յոխորդացող բերդի խորտակմանը» նա չէ նուրիրել և ոչ մի երկ, եթէ «Եսի մարդը» այլաբանորէն չը հասկանանք:

«Դարձ վէալ! մէջ երեւում են երեք ընկերներ. սրանք աւարտել են հոգեոր դպրոցը և վարդապետ ձեռնադրուելու խոստումն են տուելց էջմիածնում նըրանց մտցրել են ձեռնադրուղների ցանկի մէջ և ապա Գիրմանիա ուղարկելու՝ աստուածաբանական գիտութիւնները ուսանելու որոշումն են տուել: Այս (ակնկալութեամբ և գաղափարական դործունէութեան հեռանկարներով ոգեորուած երեք վարդապետացուներն ամառը շրջում են հայկական վանքերը. (Սիրաքեան բաժանվում է ընկերներից և գալիս է Խծկոնքի վանքը, ուր պէտք է սպասէ երկու ընկերներին. սրանք ցանկացան Շիրակ և Անի մտնել: Սիրաքեան Խծկոնքում ծանօթանում է Քանեանների ընտանիքին, Վարդապետացուն խրիմցի էր, լաւ տիրապետում էր ոռուերէն լեզուին. իւր միամիտ դատողութեամբ և թոյլ բնաւորութեամբ Սիրաքեան Քանեաններից շատ է ազդվում: Պարոն Քանեան երկար խօսում է վանական կեանքի անբնական երևոյթների մասին, կուսակրնութեան և առհասարակ կղերականութեան հնացած լինեն է ընդգծում: Իսկ վարդապետացուն համոզուած է, որ հայ ժողովրդին ծառայելու ամենէն շիտակ և յարմար ճամրան վարդապետ դառնալն է. նա ի նկատի ունի այն մեծ, առանձնայատուկ, սպեցիֆիկ նշանակութիւնը, որ ունի եկեղեցին հայ ազգի համար, ներկայանալով որպէս միակ գրաւական ազգի անհատական գոյութեան. վանական լինելը դիւրութիւններ և առաւելութիւններ

է տալիս ժողովրդի լայն խաւերին օգտակար լինելու: Բայց Քանեանները սիսալ են գտնում այս ծըագըները. ժողովրդին ծառայելու շատ ուրիշ անպարհզներ կան, դեռ աւելի լայն, հրապուրիչ և պատուաւոր Եկեղեցական ծէսերը, Նրանց կարծիքով, խեղդում են մարդու լաւ հակումները և միակողմանի են դարձնում մարդուն: Սիրաքեանի մէջ այս նոր ծանօթների հետ շփում մից սկսվում է մի ամրող մտայեղաշրջում: Քանեանների հետ էր և օրիորդ: Շուշանիկ, 20—21 տարեկան, պատրաստվում էր մանկաբարձուհի լինելու: Սիրաքեան գողտուկ համաձայնվում է Քանեանների հետ, մեծ հաճոյք է ստանում Շուշանիկի հետ զբունելով. ամրող օրեր նրանք թափառում են միասին մօտակայ սարերում, իշխում են ձորը և հիաննեմ են բնութեան գեղեցկութնամբ:

Երկու ընկերների Մինասի ու Սերոբի գալը յիշեցնում է Սիրաքեանին իւր խոստումը՝ ընկերների դալուց յետոյ նա սկզբում քաշվում է Շուշիկի հետ զբօննել, բայց յաղթում է վախը և առաջուայ պէս ամբողջ օրեր աղջկայ հետ է անցկացնում գուրսը: Երկու տարբեր ուժերի մաքառումն է սկզբում Սիրաքեանի մէջ, մէկ կողմում գաղափարական գործունէութիւնը, վարդապետ դառնալը, որ նա խոստացել էր առանց խորը մատածելու, և միւս կողմից աշխարհիկ կեանքի, դդայական վայելքի ետևից վազելը: Մանկաբարձուհի Շուշիկ վարդապետացուին զրդում է թողնել կուսակրօնութիւնը և իրեն բժշկութեան նուիրել: Մինասի և Սերոբի յանդիմանութիւնները և նախազգուշացումները չեն օգնում: Սիրաքեան հաստատապէս որոշում է թողնել վանական լինելու շանկութիւնը: Շուշիկի հետ պայմանաւորվում են Թիֆլիսում տեսնուել և ապա միասին

շարունակելու գնալ, Շուշիկ՝ կդառնայ՝ մանկաբարձու-  
հի, իսկ Սիրաքեան՝ քժիշկ: Նա գնում է էջմիածին  
փաստաթղթերը և վկայականները վերցնելու: Այդպի-  
սով տեղի է ունենում վարդապետացուի դարձը, գա-  
ղափարական մզումները թոյլ են լինում և տեղի են  
տալիս աշխարհիկ, անձնական վայելչասիրութեան: Նոյ-  
նանման մի գէպք պատմուած է և «Հին Աստուածնե-  
րի» 

Այս երեք վէպերի մէջ նկատվում է սերտ կապ. նիւթի մշակման և հերոսների աստիճանական զարգացում կայ. նրանց մէջ: «Լեռան աղջկայ», «Երազ օրերի» և «Դարձի» հերոսները միևնույն անձն են, բայց տարբեր զրջաններում: «Երազ օրերի» երուանդը «Լեռան աղջկայ» գիտերոթիկ աշակերտն է. երկու անյաջող սէր է ունենում, բայց «Դարձի» մէջ աւելի չափահաս է, արդէն վայրոցաւարտ է, վարդապետացու. մըտերմանում է Շուշիկի հետ, սիրահարվում են և յաջողութեամբ է պատկիւմ այդ սէրը:

Sept 18

and the following are the principal ones:

«ԳՈՐԾՎԵՑԿԵՐ», «ՎԵՐԺԻՆ

« Դուրսեցիներ » և « Վերժին » վէպի գործողութեան վայրը Պօլիմոնէ, Առաջին վէպը գրուած է 1894 թ. Լայպ-ցիդում Խալկուց « Մուրճի » մէջ և ապա առանձին գըր-քով լոյս տեսաւ Յեղինակը « Դուրսեցիներ » է անուա-նում այն ուսուցիչներին, որոնք ապրում են Պօլտոմ, գաներ՝ ուսեն թաղական վարչարաններում, բայց գա-ւառի հետ կապերը չեն կտրել Պօլսի բնիկ մտաւորա-կանութեան համար սրանք օտար են; դուրսեցիները վէպի գլխաւոր հերոսն է Բագրատի, Ռուսաստանում կրթուած երիտասարդ մանկավարժ. Թաղական մի վար-ժարանում նաև աւագ ուսուցիչ է. Բագրատի հետ է և Գէորգը, Բագրատ իւր բաց, ինքնավտահ բնաւորու-թեամբ, ժողովրդին ծառայելու մեծ հակումով և ազնիւ ձգումներով՝ իւր շուրջն է ժողովում գաւառացի ու-սուցիչներին և լրագրական աշխատողներին. Բագրատ իդէալիստ է, նոր շկոլայի մանկավարժ. դպրոցի համար բերել է տաղիս Փիգիքական գործիքներ, դպրոցի մա-տենադարանն է՝ կարգի դինում, մանկական պիքերի հրատարակութեան Փօնդ է կազմակերպում, և կիրակնօ-րեայ դպրոց է հիմնում մեծերի համար: Ռուբիչների բարձրացման նպաստելը, մարդկային յառաջադիմու-թեան ասեղի իրթան առուած լինելը իւր ըմբռնած իւր նմանին հաղորդելը, նրան շատ մեծ հաճոյք է պատ-

ճառում»: Բագրատ չփիտէ յարմարուել, ատում է Փիլստրներին, «որոնցմով՝ կը վիտայ հասարակութիւնը, որոնք խլուրդի չափ կամք չունին և ոչ էլ մուկի չափ սկզբունք»... Բագրատ նետվում է աշակերտների մոմէ որտերուն մէջ «սիրել», սիրուիլ ու մարդ պատրաստելու. մարդ, անհատական մարդ, ամուր մարդ, որոշ ծգումներով, կեանքը վայելելու եւ ուրիշներին վայելցնելու տինչանքով ընուած»: բայց Բագրատ «միայն մտածող վլուի մը ունեցող մարդ չէ»: «զգացում է պէտք մեզի, ասում է նա, արդէն շատ է չոր կեանքերիս»: Չըջապատող կըշտութիւնը, կոպտութիւնը, անազնվութիւնը, շահամոլութիւնը նա բացատրում է զգայութեան պակառութեամբ: Կանոջ հասարակական դիրքով: Նա դէմ է օկոնդի պէս սենեակի անկիւնը մեծնալուն: աղջիկներու շըջանը, կանացն ընկերութիւնը քնքացնում է մեր սիրտը, նրբացնում զգացմունքները և ազնուացնում մտածողութիւնը... Սէրը՝ կեանքի բարձրագոյն հպարտութիւնն է: Եզրակացնում է Բագրատ: Եւ նա սիրում է իւր տան տիրոջ աղջկան, Լուկը դիմումաբուր, պլատոնական սերով: Ինչպէս եղբայրը քրոջը...

Բագրատի գաղափարական գործունէութեան առաջ խոչնդուսներ են ստեղծվում: Թաղական հոգաբարձուները դժգոհին, որ շատ ծախսեր է անել տախս, պաշտօնակիցները նախանձում են, որ նա սիրելի է աշակերտներին: Եպիսկոպոսը փակում է կիրակնօրեայ գպրոցը: ուսուցիչները թշնամնում են հետը: Վերջը այն է լինում, որ Բագրատ և նրա անձնուելը ընկեր ֆէորդ՝ հրաժարական են տալիս և թողնում են Պօլիսը: գնում են հայրենիք, Կարին, այնտեղ աշխատելու: Բագրատ թողնում է Լուկովին: չէ ցանկանում նրան անբաղդացնել խուլ անկիւններում: Վէպում լաւ են գծա-

գրուած և գրականագէտ Մարգսի և թերուս շաղակատ վասակի տիպերը: Այս գործունէութիւնը ամենայաջող վէպն է: Այս պատմուածքում գործողաւթիւնները գարգաննեւմ են իրենց ընական ընթացքով: չկան հեզ դինակի թոյլ վաստաբանութեամբ: միայն կանգուն պատահական գէպքերը: Առաջին վէպերի մէջ, ինչպէս տեսանք, լոկ հանդիպումներ են նկարագրուած, հանդիպումներ, որոնք կարող չէին և չը լինելու պատահականը բնաղբօսիկ է և մեծ դին չէ կարող ունենալ գեղարուեստական երկի մէջ: Մանչ և աղջիկը հանդիպում են իրար և զրանից ծագում է մի ամբողջ վէպչ Ուրիշ է: «Դուրսեցիները»: այստեղ իրական կեանքն է հերոսների գործողութիւնները զիկավարում: տգէտ եպիսկոպոս, շահամու հոգաբարձուներ, անազնիւ պաշտօնակիցներ, նախանձ: ատորութիւն... մի խօսքով իրական կեանքը իւր տեսակ-տեսակ ձևերով: ահա սրանք են գործունէութիւնների գործողութեան ընական ընթացք տուողները: Այս տեսակէտից էլ «Դուրսեցիները» Շանթի ամենայաջող և ուշալ վէպն է:

«Վերժինը» Շանթի մինչև այժմ գրուած վերջին\*) վէպն է: Այս գրուածքը ամբողջապէս նույրուած է սիրոյ զարգացմանը, կոյս սրտերի առաջին ցնցումին: Օրիորդ Վերժին (Վերժինէ) Պղտիկեան 20՝ տարեկան աղջիկէ: մի տարին է, ինչ աւարտել է Պօլսում գտնւող Ամերիկեան միջնակարգ դպրոցը: Շփոքը, նուրը, արձանի համաշափութեամբ կերտուած, քնքուշ և կոր գծերով մարմին մը էր Վերժին, ձկուն ու տղկուն: Վերժին սիրուն էր, այս տեսակ մը պիքանտ սիրունութիւններէն, որոնք կարծի հրաման մը են համակրելու:

\*) «Դուրսանանուին» վէպը ձեռքերիս չունենք, իսկ «Կինը» նոր է տպագրվում բնոր հոսանքի մէջ և դեռ չէ վերջացել.

Նայդ հրամանին անկարգելի է չը հնապանդուիլ Աղ-  
ջկը բժիշկ եղբայր ունի և ծերունի մայր։ Վերժինի  
մէջ սէրը վաղուց սկսել էր հասունանալ զիշերները  
գողառւկ, առանց պատճառի լցները յաճախ էին պա-  
տահում։ Նա շատ քիչ կարևորութիւն կը դարձնէր շուրջը  
գտնուող երիտասարդներին։ Նրանք փոքր էին իրեն հա-  
մար. Վերժին իւր իդէալը՝ ունէր կորովի բնաւորու-  
թեան, կենդանի գործունելութեան մի տիպար, պարզա-  
ցած, զուարթ և լուրջ մի երիտասարդ։ Այսպիսով  
Շանթ ներկայացնում է մի անարատ աղջիկ հասունա-  
ցած հոգով, սպասողական դրսւթեան մէջ մինչ կը լի-  
նի վերջը։ Ո՞վ պէտք է լինի նրա ընկերը և, դուրս  
քաշելով եղբօր տանից, նոր շրջանակների մէջ դնէ  
Վերժին սիրում է հայր գրականութիւնը, Կարդում է  
հայ թերթերը, ծանօթ է երիտասարդ բանաստեղծ Տի-  
րանին, որի ոտանաւորները հաճոյք են պատճառում  
իրեն։ Տիրանը վարժապետ է, բայց պարապում է և գրականութեամբ։ արդէն բաւական անուն ունի. մտու-  
դիր է անակ ժողովել և Պարիզ անցնել, ուսումնասիրե-  
լու գրականութեան տեսութիւնը։ Տիրան-երազող, խոր  
զգացող, նուրբ մտածող է, անտարբեր չէ դէպի վեր-  
ժին։ բայց շատ գոռող է և սէրոյ մասին զեռ ոչինչ չէ  
ասել արջկան։ Նրա հին դասընկերը, Արշակը արձա-  
կուրդներին եկել է Պօլիս երկու ամսով. ուսանում է  
գերմանական համալարամաններում ընկերական գիտու-  
թիւնները։ Արշակ ձեռներից է, գործունեամ, զարգա-  
ցած։ Նա աշխատակցում է Պօլիս հայ թերթերին և Սլաք ։  
ծածկանունով։ Նրա եւրոպական համակները սերով են  
կարդացուել. ունի մի խումբ համախոհ ընկերներ, ու-  
րոնց հետ մտադիր է ուսում վերջացնելուց յետոյ Պօլ-  
սում մի գիտական ամսագրի հիմքը. դնել այդ պէտք  
է լրացնէ գլուխոցի թերին և գիտական բազմակողմանի

լրաբացում՝ մատակարարէ երիտասարդներին, լուրջ՝  
սիստեմագիկ զարգացում։ և ոչ ըրջիւրի կրթութիւնն...  
Տիրանի միջոցով Արշակ ծանօթանում է Վերժինի հետ։  
Այս ծանօթութիւնն է վէպի ֆարուղան Վերժինին թը-  
վում է, թէ նա գտել է իւր իդէալը։ Արշակի յօդուած-  
ներին և զրոյցի աղքեցութեան տակ նա որոշում է վար-  
ժուակի դառնալ, անգործ չը մնալու «մօխրագոյն» աղջ-  
տութէնու չը մաշոււիլու «Ճինապակի ծաղկամանի մը պէս  
տան մէկ անկիւնը անպէտք չը նստել, ու ամուսնի չը  
սպասել այլ գործ տեսնել ու անկանութիւննել։ Վերժին  
շարլօն աղջիկներէն չէ անպունի ձգուամեներ, հասարա-  
կական գործչի ջիղը կայ նրա մէջ Արշակ խոստանում  
է նրան օգնել բայց աղջկայ մտերիմները զօրեղ դի-  
մադրութիւն են ցոյց տալիս։ վարժուհի լինելը ան-  
պատուաբեր էր Պղտիկեանների աղջկան, Արշակ ա-  
ռաջարկում է Վերժինին, նախ մատնազիտական ման-  
կավարժական կրթութիւն ստանալու ապա վարժուհի  
լինելու այլպէս աննպատակայարմար և դփուար է մէ-  
կէն ի մէկ գպրոց մտնել աղջիկ ճամոզվում է և ար-  
տապահման գնալ է որոշում։ Այս անգամ դիմադրու-  
թիւնն աւելի թոյլ է լինում, բժիշկը մինչև անգամ օգ-  
նում է քրոջը Շուէյցարիա իւր ընկերոջ մօտ ապրելու։  
Արշակ ճանապարհ է ընկնում դէպի Փերմանիա, մի-  
քանի օրից յետոյ գուրս է գալու և Վերժին։ Նրանք  
նորէն կտեսնուին իրար այստեղ։ Այս է վէպի բովան-  
դակութիւնը։ Բայց այստեղ էլ կան հոգեկան մաքա-  
ռուամեներ, ինչպէս և Շանթի բոլոր գրուածքներում։  
Բանն այն է, որ Տիրան ևս սիրում է Վերժինին։ Նրա  
բանսատեղծական սիրալ խորունկ վէրք է ստանում,  
երբ Արշակ հանդէս է գալիս և խլում է աղջկան իրե-  
նից։ Արշակ սկզբում չէգիտէր, թէ ընկերը սիրում է  
Վերժինին։ Երբ ըրոջ միջոցով իմանում է, որ Տիրան

սիրահարուած է և այնք որ ինքը՝ անազնվութեամբ  
յափշտակել, գողացել է Աերժինին իւրն ընկերի սըր-  
տից՝ վճռում է այլև երբէք չը տեսնուել աղջկայ հնատ  
և ուղղել իւր սիրալը, թոյլ տալ, որ Տիրան հասնի իւր  
նպատակին, Արշակ մեկնում է մօտիկ մի կղզի, այս-  
տեղ մի շաբաթ անց է կացնում, բայց չէ կարողանուան  
համբերել և վերադասնում է, նա էլ է սիրահարուել  
Աերժինին տեսնվում են, բացվում են իրար, համբուր-  
վում. Կրկին հոգեբանական անախորժութիւններ են  
տեղի՝ ունենում և Արշակ մի նամակով խնդրում է վեր-  
ժինին՝ մոռանալ պատահածը, որ այն մի սխալով նըր  
է եղել միաժամ... (Երկուն էլ հասկանում էին, որ «սխալ»  
մունքը չէ անցածը, և «աւելի» են սիրում իրար: Նրանք  
բաժանուում են, արտասահմանում հանդիպելու համար,  
ինչպէս խծկոնքում. Սերաքեան և Շուշեկ բաժանուե-  
ցին, թիֆլիսում պատահելու պայմանով:)

Մենք ծանօթացանք Շանթի վէպերին. Արանց  
գլխաւոր քարուլան՝ սէրն է. սիրոյ շուրջն է պատվուս  
ամբողջ գործողութիւնը: Հերոսների քայլերը: Միդէպ-  
քում սէրը յաջողութեամբ է պսակվում, սիրող սրտերը  
գրկում են իրար («Ետքը», «Վեժին»): Երկրորդ գէպ-  
քում սէրը անյաջող է լինում՝ սիրահարների անհամա-  
պատահիան լինուու («Երազ օրեր») և արտաքին հա-  
սարակական խոչնդուաների պատճառով («Դուրսնացեց-  
ներ»):

لیکن این اتفاقات بسیاری از اینها را می‌نمایند و اینها را می‌نمایند  
و اینها را می‌نمایند و اینها را می‌نمایند و اینها را می‌نمایند و اینها را می‌نمایند

„ԵՍԻ ՄԱՐԴ“ ԵՒ „ՏԱՄԹՅՈՒՆ ՎՐԱՅ“:

«Եսի մարդը» հինգ արար, ունիք պրոլետական թատրոն, մասնակի աշխատավայր՝ առաջին գըրքում։ Անցքի տեղն է Պոլիսը։ Գլխաւոր հերոսն է Մուշեղ Տէրեան։ Մի ժամանակ եղել է գաղտնի յեղափակական կազմակերպութեան մեջ, բայց այժմ նա պարզապէս մի դաւաճան է, ընկերների մատնիչը։ Ոստիկանութեան փաշայի գործակալը։ Յեղափոխականների փողովը վճռել է Նորան տերորի ենթարկել։ Այդ վճիռը սէտք է հաստատէ Սեդրակ, բայց նա տառանվում է, «երբ պարտականութեան պաշտօնական վերարկուն ուսիրին չկայ, երբ մարդն է, որ մէջը կը զգայ ու կը խօսի», նա դժուարանում է մահուան վճիռ արձակել։ և մէկ էլ Սեդրակը, մինչև արտասահման մեկնելը, մօտ է եղել Մուշեղենց։ վերջինս մի քրոջ աղջիկ ունի, սիրուն, կայտառ մի էտակ։ Սեդրակի առաջին պատահեկան սէրը այս աղջիկն է եղել, և յանկարծ Մուշեղի մահուան գործը Սեդրակի ձեռքով է անցնում։ Մուշեղ

անսպասելի կերպով մտնում է Սեղրակի մօս և յանձնում է նրան ոստիկանութեան բռնած մի քանի նամակներ, ու այդպիսով ազատում է Սեղրակին ձերբակալումից: Այս առիթ է տալիս Սեղրակին մտածելու, որ Շմարդու մէջ մարդը երբէք չի մեռնիր, որ լաւի ու անմաքուր գործի գգացումը մարդու մէջ կա ու կա միշտ, որիչափ էլ մարդը դիմամբ ու պահանջ ու զետէ կա, գուցէ ծածկուած, մոխիրի տակ, գուցէ ժանդուուած, բայց կա: Մոխիրը խառնող ձեռք մը պէտք է, որ կայծերը պլանան: Սեղրակ ցանկանում է այդ ձեռքը լինել, ու Մուշեղին փրկել: առաջարկում է նրան անցնել իրենց բանակը, ճեռն; ուրն Մուշեղ երբեմն եղել է, բայց թողել է մարդկացին բնական պկարութեամբք: Սեղրակ առաջարկում է Մուշեղին արտաքուստ մնալ այն, ինչ որ էր, պահէ ոստիկանութեան: հետ կապերը, մինչեռ ներքուստ աշխատելու է գործերը լիճճել, կարեոր թղթերը ձեռք բերել, կազմակերպութեանը անդեակ պահելու: Այսպիսով Սեղրակ ցանկանում է մատնիքը լրաեսի, պրօվկատորի, ազէֆի վերածել: Բայց Մուշեղ չէ համաձայնվում: նա միայն ճանաչում է իւր «եսը»: նա եսի մարդն է, նրան օտար, են, հասարակական և ընկերական գաղափարները, նա ծագրում է, ժողովրդին ծառայելու միտքը: Շմարդու մէջ կայ միայն ուրիշը իրեն ծառայեցնելու ու բնական պահանջը: ընկերական ընազդը բոլորովին չկայ նրա մէջ: Ժողովրդը նրա համար Հանկոտոց նախիր է: Նա չէ արժանացել սիրոյ: առողջ, կենսատու սէրը օտար է նըրան: նա միայն մի աէք է ճանաչում: «ինքնինքն սիրելը, եսասիրութիւնը: Մուշեղ է գոտիստ է, պաշտում է իւր եսը, ամբողջ կեանքի իմաստը, գանում է իւր եսի գուրգուրման մէջ: Սեղրակ վիրար հաստատում է, տաշը լիս է, որ իրագործեն, իսկ ինքը մի վերջին ճիգ է, ա-

նում Մուշեղին համոզելով, իզուր, Մուշեղը նրան փսկոյն ձերբակալել է տալիս, իսկ միւս առաւօտ վճիռը իրագործվում է, Մուշեղին սպանում են: Այդպիսով եսի մարդը, ինքնավստահ, չար և պակասաւոր մտածողութեամբ և կոշտացած սրտով մեռնում է: Ծանթի սիրած փարուղան՝ սէրը, այս դրամայում էլ կայ, բայց վճոով նշանակութիւն չէ ունենուած: Արաթսին՝ սիրահարուել է Սեղրակին, իսկ Ազնիւ, Սեղրակի Փոյրը, անտարբեր չէ դէպի Մուշեղը: Բայց այս կերպու գդայական սէրը չէ կարող գարգանալ գաղափարական գերակշող արժէքների դիմաց:

Ծանթի միւս դրաման աջններուն վրայց, սիրէկի ընտրութեամբ, մօս է առաջինին: յեղափոխականներ են հերոսները, բայց նիւթի մշակումը տարբեր է: Դրամայի գլխաւոր գործող անձն է Վահրամ: նրա ամբողջ պատասխեկութիւնը անցել է պատառ մը հացի և պատառ մը ուսման համար: թափառելովք, վեց ամիս է, ինչ վերադարձել է Փարիզից, այժմն մտել է դէպի երկիր գնացող խմբի մէջ, ուխտել է իւր ժողովրդի ազատագրման համար իւր կեանքը գոհել: նա այսուեսու իրենը չէ, նա տուել է իւր ուխտին ամին ինչ, նա շուտով պիտի երթա երկիր, մեռնելու համար, այդ նաշատ լաւ գիտէ: գնացողին դարձ չկայ: Վահրամ ընտրել է ուրեմն գաղափարական մի կեանք, և իրաւունք չէ համարում իւր անձնական երջանկութիւնը ունենալու: նա չէ կարող իրեն երջանիկ զգաւ երբ, իւր եղբայրները տառապում են և մորթուսվում սարսափների մէջ: Յաւի ու աղեան ծրման է կանչում Վահրամին, նա իւր ընկերներով զնում են նետվելու այդ ծովը, երբ յանկարծ Վահրամի ճամբուն վրայ կանգնում է: մի աղջիկ և թայլ չէ տալիս ծովը նետուելու: Աղջիկը խորտանում է: Վահրամին ամին անձնական երջանկութիւն, սէր,

հարստութիւն. իւր կարողութիւնը կտայ, որ երկիր ուղղարկեն, միայն թէ Վահրամ մնայ, Տղան պահ մի գըրաւում է աղջկանով, այս ծանօթութիւնը օազիսի պէս քաղցրութիւն է տալիս Վահրամի կեանքին, նա ծարաւի է գգուանքի, քաղցր խօսքի, սիրոյ: Բայց աննկուն է և նրա գաղափարական կորովք աղջկայ սիրոյ և դիակի վրայով Վահրամ շարունակում է իւր ճանրան, Տիեմում է տառապանքի ծովը երկիր է գնում Տրապիզոնի վրայով: Այսպիսով և վերջանում է դրաման: Շատ հետաքրքիր է Վահրամին սիրող աղջկայ տիպը: Մարի է նրա անունը, ունի մայր և մի վաճառական եղբայր, Հարինց Արթին: Արդէն հասակին առած աղջկի է Մարին: և հարուստ: հասարակական գործունէութեան ջիղը նրա մէջ բնաւին չկայ: Մարին խուփ կեանքի սիրահար է և միայն իւր անձի երջանկութեանը հետամուտ: Երբ պատահում է Վահրամին, կըպնում է նրան, որպէս մի մակաբոյծ և ցանկանում է իւր օգտին ծառայեցնել տղային, վանելով նրանից գաղափարական գործունէութեան ծրագրները: Վահրամին տեսնելուց յետոյ Մարին ձանձրանում է շրջապատող փարթամութիւնից, նրա մոխրագոյն տաղուկն է վերջանում, աղջկայ կծկուած հոգին է բացիում և իւր ցանկացածի պէս ապրել ծրագրում: Մարին տալիս է տըղային իւր միրտն ու հոգին «անվերապահ, ու անվերագրած», նոյնը և տահանջում է Վահրամից, որ նա էլ «անվերապահ ու անվերագրած աղջկան տայ իւր սիրտն ու հոգին, տառապանքի ձայնը մոռանայ, գաղափարական մղումները զսպէ իւր մէջ և ապրի, շնչէ միայն Մարիի համար: Անձնական երջանկութեան այս ծրագրիը ամբողջապէս կլանել է աղջկան: Վահրամ երկու կրակի մէջ է ընկնում: Ակավում է ներքին գորեղ պայքար՝ անձնական վայելչասիրութեան և գաղափա-

րական: ձգտումների միջն Անկարին գգայական, անձնական սէրը, վայելքի ձգտումը, սիրող հայեացքի կարօտը, անյագուրդ հրապոյը ծարաւը, ոմիցումն սրտերու, երբ մոռացումն է ամեն հողեղէնի, երբ ցալումն է հոգիներու: Իսկ Անկար կողմից՝ երկիրի ձայնի կոչը, սարսափի և տափապանքի մէջ փոթոթուող եղբայրները, ընկերական բնագնների գրդումը, գաղափարի մղումը, ժողովրդի աղատագրման վեհ հեռանկարը.. Վահրամի հոգին պայքարի ասպարէզ է գաւանում: ո՞րն ընտրել: Շանթի հերթոնը այստեղ գերադասում է գաղափարականը: Անձնական սէրը և Մարին նա զոհ է բերում մորթուող եղբայրների օգնութեանը» Վահրամ շոգենաւով գնում է Տրապիզոն, երկիր մանելու համար, իսկ Մարի շոգենաւը տեսնելուն պէս ատըճանակի մի գնդակով վերջ է տալիս իւր կեանքին: Մարի պոկուեց հաստաբուն ծառից և մեռաւ, ինչչէս մեռնում են ինքնուրոյն անկախ կեանքից զոնրկ բոլոր մակարոյծերը: Մարին անհամակրելի անձնաւորութիւն է, բայց նա տիպ է, մեր կեանքը լիքն է այդպիսիներով: ուրիշի շինքից կախ ընկնելը և համբոյրներով կեանքի իմաստը լցնելը սովորական երեսյթ է...»

Վերջերս Շանթ հասարակութեան ընծայեց իւր երրորդ գրաման՝ «Հին Աստուածները», որ մոռացնել տուեց նախկինները: «Հին Աստուածները» մի սքանչելի գործ է, որ պատիւ կարող է բերել ոչ միայն հեղինակին, այլ և ազգին: Այս նոր գրաման լի է հոգեբանական խորոնկ ապրումներով և տարբերվում է նախորդներից իւր արտաքին կառուցմամբ: Սիմվոլիզմ, որ չկա հին գրուածների մէջ, այս նորի մէջ մէծ մէծ գործադրում է ստացել: Երազներին կօնկրէտ ձևեր տալը, տեսիլները իրականացնելը մի նորութիւն է Շանթի գրքերում և հայ գրականութեան մէջ: Ներքին բովան-

դակութիւնը նոր է: այդ յաւիտենական մի ճշմարստութեան համար մզուած մարդու ներքին տարբերաշխարհների կոիւն է, սիրոյ և գաղափարի անվերջ հակասումները: Դա Շանթի սիրելի թեման է, յայն տեսչը, որի մի արտայայտումն է յիշուած ոտանաւորը երնէկ լինիմ երազ անուշ,

Կուսանոցէն ներս սըպըրդիմ

Ու տամ փունջ-փունջ յոյզեր քնքուշ  
կեանք երազող անկեանք սրտին:

Եւ կամ հւր՝ է, որ երկնային:

Տեսիլ դառնում քերթողին դէմ,  
գատուեմ քօղը ասլագային,

Նոր ներշնչում իրեն ազդեմ.

Ու կեանքիս մէջ գէթ այս անգամ

Պէտքի գալս և սրտէս զգամ:

Շանթ իւր «Հին Աստուածներով» պէտքի եկաւ,  
շատերը կարդացին նրա գիրքը և «ապատուցին քօղը  
ասլագային»<sup>1)</sup>...).

<sup>1)</sup> Շանթի գրական գործունէութիւնը լրիւ ներկայացնելու համար պէտք է յիշեցնենք ընթերցողին, որ նա ունի և թարգմանութիւններ. Վոյնիչի յայտնի «Բոռ» վէպը Շանթն է հայերէն թարգմանել, (հրատարակ. «Ստ. Լիսիցեան և Բնկ.»):

## „ՀԻՆ ԱՍՏՈՒԱԾՆԵՐ“

«Հին Աստուածներ» գրաման չորս արար ունի, 12 պատկեր. գրուած է 1906 թ. երևանում: Գործողութիւնը կատարվում է մի ամբողջ հազարամետակ մեզանից առաջ: տեղը՝ Սևանն է: Սևանայն կղզին, որ հին աստուածների, հեթանոսական կենսուրախնեանքի վայրերից մէկն էր, այժմ, քրիստոնէութեան տարածումով ճնշարանի և անսապատի էր վերացվում: Կեանքի և բնութեան պաշտամունքի մեհեանը փոխարինվում է վանքով, կղզի է մտնում մի մուայլ ամբոխ, որ թշնամի է՝ կեանքի, գեղեցկութեան, ուժի և ծնունդի: Սկսվում է պայքար ննի և նորի հակոտնեաների միջև: Մի կողմում կանգնած է հեթանոսութեան ներկայացուցիչը, շքեղ մօրուքով ներմակաւորը, իսկ միւս կողմում նըստած է քրիստոնէութեան պաշտօնական ներկայացուցիչը՝ Վանահայրը: Այս պատկերով էլ սկսվում գրամայի առաջին արարը: Ճերմակաւորը նեխնում է Վանահօք գործը և յանդիմանում է նրան: «Այս սեաւոր, ինչու ես ժողվեր զիսուդ այդ սեազգեստ ու սեահոգի մարդիկը, ինչու ես եկեր այս սրբազն հինաւուրց կղզին: Եմիր, ելիր. քշէ նորէն դուրս դէպի կեանքը այդ թըշւառ ու մուայլ ամբոխը, Ելէք գնւրս, դուք, որ զգայարանքներդ չորցնել կուզեք և կրքերը մարել: Դուրս այս կղզիէն, դուք, որ թշնամի էք ամեն զեղեցկութեան, ամեն կեանքի ու շարժումի, ամեն ուժի ու

ծնունդի, Դուրս, մի աղարտէք իմ աստուածներուս այս սուրբ դրախտը»: Վանահայրը ցանկանում է անապատ դարձնել այս ծիծուն կղզին. Ճերմակաւորը դէմ է. «Այս կղզին ալ նոյն աշխարհն է, ինչպէս ամբողջ աշխարհը. այստեղ էլ կան աստուածներ, յաւերժ ու անմահ»: Ճերմակաւորը ստիպում է, որ Վանահայրը երկրպագէ այդ աստուածներին և խոստովանէ նրանց հզօրութիւնը. բայց Վանահայրը ուշք չէ դարձնում Ճերմակաւորի խօսքերին և շարունակում է կառուցանել իւր եկեղեցին: Այս եկեղեցու կամարները սակայն բարձրանում են վանահօր և Մարիամ իշխանունու փոխադրձ վաղեմի սիրոյ յիշտակների վրայ. իշխանունին կանգնեցնում է եկեղեցին ոչ թէ այն պատճառով, որ քրիստոնէութեան տարածման ջատագովն է, այլ որովհետև սիրում է վանահօրը և իրենց այդ սէրը յաւերժացնելու համար նրանք կանգնեցնում են ո. Մարիամ Ասպուածածնի եկեղեցին: Զգայական սիրոյ և աշխարհի ստուէրն է ընկնում ուրեմն եկեղեցու վրայ»: Սկզբում վանահայրը պարզ չէր տեսնում այդ. դրամայի ընթացքում նա ըմբռնում է իսկական պատկերը և մենք կտեսնենք, թէ ինչ է անում: Իշխանունու եղբայրը և վերջինիս չափահաս աղջիկը անցնում են ծամագարելով և ցանկանում են կղզի մտնել՝ իշխանունու եկեղեցին տեսնելու: Նաւ են նստում և երկու վանական-թիավարների օգնութեամբ լողում են դէպի կղզի. քարձրանում է փոթորիկ. կղզու մօտ մի հսկայ ալիք ծռում է նաւը և իշխանի աղջիկը ծռվն է ընկնում. թիավար արեղան մի կողմն է նետում վերարկուն և իսկոյն իրեն գցում է ծովը՝ աղջկայ ետևից. նրան գրկած, լողալով հասցնում է մինչև կղզի: Ծովի մէջ ծռում է նաւը շուրջը և հեգնում են Արեղայի խաչը. «Ախ, այս սիրուն խեղճ մանչը, ալ անզօր է քու խաչը». նրանք կուղին Արեղայի հոգին առկայծի և

անձնադոհութեան առջև իշխանը երախտապարագանք ուղղում մեւալ. աղջկայ կեանքն ազատուած: Էլք մահէն, և համար ասում է: Իշխանը Արեղային, վրայ պիտի չըլլար այդ ակ վերարկուն, և ես գիտէի: իմ անեղիքս: Թեզի կուտայի իմ տակիս նժոյգը, կուտայի քեզի այսոր ականքիան սուրս, կառնէի քեզի իմ պալատու: իբր իմ հարազատ որդի... Զիս ու սուրս եթէ հերիք չեկաւ, կուտայի քեզի և աղջիկս, որուն կեանքը այսօր ակատեցիր... Վանահայրը դժգոհութիւն է յայտնում: իշխանի այդ խօսքերի համար: Իշխանը չգիտէ, ինչով ապացուցէ իւր գոհունակութիւնը, և վերարկուն կաշկանդում է նրա թիւերը և նա միայն: Արեղայի ձեռքն է սեղմում ամուրը:»

Իշխանի խոստումները, ծովի մէջ զգացած մեծ հաճոյքը տակն ու վրայ էին անում: Արեղայի մտածողութիւնը. նա այլև չէ մոռանում: Իշխանի աղջկան, որի անունը լսել էր իշխանից, նաւի վրայ: (Արեղային երեսում է Սեղան, ծովը, սուր, նժոյի, իշխանութիւն. նրա լարուած հոգիկան դրութիւնը շարունակվում է մի քանի օր, Արեղան հիւանդանում է) Յայտնի է, որ հիւանդները յաճախ են տեսնում երազներ: Դրամայում դուրս են բերուած Արեղայի մի շարք երազները, միգանոյշները, հովիկները, ճգնաւորը, քօղաւորը, վահագնի պաշտամունքի ծէմքը... Արեղայի համար մի նոր մտաշխարհ է բացվում, նա սկսում է դմբռնել, որ քրիստոնէական գաքափարը չէ միայն կեանքին բովանդակութիւն տուողը, այլ կան ուրիշ աշխարհներ, զգայական վայելքի, կեանքի, կռուի աշխարհը: Կայտառ վազքով և կենսուրախ երգով միգանուշները ժողովում են նրա շուրջը և հեգնում են Արեղայի խաչը. «Ախ, այս սիրուն խեղճ մանչը, ալ անզօր է քու խաչը». նրանք կուղին Արեղայի հոգին առկայծի և

սէրին սիրով պատասխանէ. օնէըը սիրով, սէրը սիրով, օրէնքն ասէ դարերով. սէր և թևեր կպակսն Աբեղային. նա գամուած է գետնին, անապատին. չունի թևեր, որ դէպի կեանքը, ուրախ կեանքը թռնի, եթերի յոյզերը և ծովի շունչը ջերմ փարուած իրարու, ներկայանում են Աբեղային, որպէս մի անթերի, կատարեալ կեանք: Նա զգում է իւր անընկեր, մենակ լինելը, չը գիտէ; թէ ինչու է ճգնում, ինչ է նպատակը. երեւում է ճգնաւորը և մի սոսկալի բառ է ասում Աբեղային՝ ունայնութիւն. աննպատակ, դատարկ է կեանքը, վայելքը, ապաշխարհանքի քարոզը, խոնարհութիւնը, մտաժմունքը, հոգու փրկութիւնը. այս բոլորը անցել է ճգնաւորը, և դրանից միայն մնացել է եցել է մի փոս, ունայնութեան փոս, որ փորել է եղունկներով, ուղեղովս ու սրտովը, փորել է անընդհատ, ծնած օրից մինչև վերջին վայրկեանը, փորեր է ու որոնէր տակէն բան մը գտնելու համար, կարեորբան մը. փորեր է ու պահպանէր, որ այդչափ աշխատանքը չը կորչի: Դատարկ է դատարկ: այդպիսի մի փոս էլ Աբեղան է ունենալու, եթէ անապատում մնա և ճգնի. բայց ահա դալիս է Քօղաւորը՝ Սեպան և լցնում է ունայնութեան փոսը: Այդ մի գեղեցիկ պատկեր է. Սեպան լցնում է փոսի մէջ շշոյող, անուշ երազնը, ծաղկանը, ծաղկանների, ծաղկանը... Ապա Աբեղան ականատես է լինում վահագնի պաշտամունքին... կոռւից յետոյ իշխանը իւր զօրականներով և աղջիկներ գալիս են. Վահագնի մեհեանը, երկրպագելու նրան, ձօներ ձօնելու և արեի ծագմանը սպասելու, Դեռ բաւական ժամանակ կայ մինչև արեի ծագումը. խումբը նստում է. Վահագնի և Աստղիկի սեղանը. զօրականների հետ խառն են աղջիկներ. սիրաբանութեան և աշխոյժ զրոյցի են բռնուած. Աբեղան սեան. ետևէն կը դիտէ այս խրախճանը. իշխանը լրեցնում է բոլորին և թաւը բարձրացնում է Վահագնի, կեանքի, կոռւի, ուժի, Աստուծոյ կենացը. Աբեղան զողովշուն մօտենում է սեղանին և իրեն էլ թաս է պահանջում, նա էլ է ուղում Վահագնի կենացը խմել: Ուրախացողները ծիծադում են արեղայի երեսին՝ մուլալով չէ կարելի Վահագնի թասը խմել. ընդհանուր հոհոցի տակ Աբեղան քաշում է իւր տեղը. Իշխանը բարձրացնում է երկրորդ թասը՝ Աստղիկի, գեղեցկութեան, հմայքի, սիրոյ, վայելքի Աստուծունու կենացը. այս անգամ էլ

Գող ու անցուկ ու կարօտ,  
Մածուկ արցոնք վարանօտ,  
Խելքի մտքի հակասում, միշտ  
Նոր կեանքի սպասում...  
Գգւանք, ժպիտ, գոյն ու բոյր,  
Աչքեր վճիտ ու համբոյր.  
Իղձեր անվերջ, անմեկին,  
Տագնապ ու տեսչ մոլեգին.

Է երեսմ Արեղան և վճռական իրենէլտեզ է պահանջում սեղանի շուրջը. իհարկէ նրան. էլի ծաղրում են, բայց Արեղան չէ շփոթվում, մէկ զօրականի դլորում է գետին, նրա սուրբ խոռում է ձեռքից և ինքն է նստում տեղը. ուրախացողները զարմանում են Արեղայի ոյժին. բայց հաշտում իրդութեան. յաղթողն ամեն տեղ յարգ ունի. Արեղան խմում է Վահագնի, Աստղիկի և Սեղայի կենացը. Կանգնում են Արեկի ծագմանը երկրպագելու. վառայեղօրէն դուրս են գալիք Վահագն և Աստղիկ, մերկանդամ և իրար ձեռքի. բոլորը ջղում են, միայն Արեղան կանցնած է. երեսմ է Սեղան և սրա ազդեցութեան տաղ Արեղան չօքում է, նու Արեղապագում է հին աստուածներին. Այս բոլորը երազի մէջ, իհարկէ, իրականութեան մէջ Արեղան եկեղեցում պատօտեան ժամասացութեան միջոցին ուշաթափում է և նրան իւր խոռցն են տանում. Անկողին է ընկնում. Այստեղ էլ հանգիստ չեն տալիս նրան Սեղան և Արելը. Վանահայրը նրան երեք օր ժամանակ է տալիս որոշելու անելիքը. մնալ անապատում թէ դուրս դալ աշխարհ. Սեղայի մտապատկերը քաշում է Արեղային նոր կեանք սկսելու. Արեղան խստանում է հետեղ Սեղային. Կազդուրուելուն պէս, բաժանվում է Վանահայրից, ուր թողնում է անապատը և նիւթապաշտ վանականներին և բարձրանում է վեր՝ ճգնելու, մի փոքրկոտ գիշեր թողնում է խցիկը, մնաս բարով է ասում անապատին, անողոք և վրէժինդիր Աստծուն և նետիրում է ծովը. որպէսզի գիարած երկակայական Սեղայի ինկելի մարմնին, շունչը շնչին, անցնի դէպի նոր անծանօթներ, նոր գոյութիւն և նոր կեանք. դէմը եկած վանականին նա հրում է մի կողմ և վախկոտ է անուանում նրան, ովախ լոյսերէն ու բերկրանքէն, վախ մութէն ու տանջանքէն, վախ աստուածներէն,

վախ դժոխքէն և Մեռելութիւնն է վանականների կեանքը, Արեղան պոկլում է այդ մեռելութիւնից և իրեն նետում է ծովը՝ ամլրելու, Սեղային գրկելու. Այս է Հին Աստուածների բովանդակութիւնը Դիմենք գրամայի վերլուծմանը: Այստեղ կայ երկու ֆարնուլա. առաջնոր Վանահօր և իշխանուհու փոխակարձ յարաբերութիւնն է, նրանց կառուցած եկեղեցին, բակ երկրորդ Փարուլան երիտասարդ Արեղան է իւր Սեղայով ու երազնեցոյ: Կերպուծենք այս երկուսը առանձին առանձին:

Վանահայրը քաշուել է Սևան, իւր ետեղ թողնեալ աշխարհիկ կեանքը, արքունիկը և իշխանուհուն. երբ այրիանում է իշխանուհին, դալիս է վանահօր ետեից և Ցամաքաբերդում բնակութիւնն է հաստատում Նախկին մէրը գեռ կայ իշխանուեալ մէջ. նրա կեանքի գորշ երկնքին Վանահայրն է եղիլ լոյսի աստղ, դա է միսիթարել և սփոփել իշխանուհուն: Վանահօր հետ նա Սևանայ կզզում եկեղեցի են շինում. կառուցումը արագ առաջ է գնում. իշխանուհին շատ ուրախ է. Եկեղեցու կառուցումով իշխանուհին մարմնացումն է տալիս իւր սէրին: Մէկ օր իշխանուհին պարզօրէն ուզում է խօսել Վանահօր հետ, յայտնել նրան, որ եկեղեցին նրանց սիրոյ արգասիքն է: Վանահայրը, որին սիրոյ հասկացողութիւնը օտար է և ցանկանում է ոչնչացնել ըներշքին վայելիք ծածուկ կարօտը իւր մէջ, զայրանում է կնոջ խօսքերէն, կտրում է նրա հետ ամեն կապ, առաջարկում է նրան հեռանալ Ցամաքաբերդից և որոշնում է քանդել կառուցուղ եկեղեցին, որովհետեւ այս եկեղեցին նուիրուած չէ մեր Աստծուն. այս եկեղեցին երբ ես կը շինէի, գեռ կտրուած չէի աշխարհքէն... Աքխարհքինն է այս եկեղեցին, մեր Աստծունը չէ, ատոր կամարներուն տակ մենք այլևս աղօթել չենք կընա.

պէտք է զինել նորը, առաջնց արտաքին աշխարհի օգնութեան, իւր մէջքով, իւր ձեռքերով, իւր խելքով։ Վանականները չեն հասկանում Վանահօրը և հակառակում են քանդել կառուցուող եկեղեցին։ Վանահայրը թողնում է վանականներին և եկեղեցին և առանձնանում է կրցու բարձրաւանդի վրայ, իւր հոգու եկեղեցին կերտելու, ճգնելու։ Յաղթում է գաղափարական մղումը։ իշխանութու սէրը և կեանքի վայելքի տեսչը անկարող են լինում։ կանգնեցնել Վանահօրը։ Այսպիսի լուծումն է ունենում առաջին Փարուշան։ Երկրորդը գրահակունեան է։

Երիտասարդ Արեղան, որ մեծացել է Վանահօր գաղափարական քարոզներով, յանկարծ ճաշակում է գաղտնի քայլցրութիւնը, ըմբռնում է զգայական վայելքի գոյութիւնը, լուսում է իւր սրտի ճայնին (Սեղաթուրքերէն ճայն), ծանօթանում է կեանքի հրապոյրներին, արևի ծագումն է տեսնում երազում և թողնում է գաղափարական արժէքները, գնում է Սեղայի ետեից։ Այսպիսով Երկրորդ Փարուղան վերջանում է զգայական, աշխարհիկ վայելքի յաղթութեամբ։ Հողեբանական կնճոտ հանգոյցներ ստեղծելը և նրանց պարզաբանելը՝ նորութիւն չեն և Շանթի համար։ Նոր չեն և այս գրամայի հերոսների գէմքերը։ սրանց նախատիպերին մինք ծանօթացանք—Շանթի վէպերը աչքի անցկացնելով։ Այժմ դրամայի (գործող անձանց բնութագիրը տանք, պարզելու ՀՀին Աստուածների) բովանդակութեան մանրամանութիւնները։

Ահա վանահայրը, առօրեայ կեանքի վայելքներից հիասթափուած մի մարդ, որ հետամուտ է լինում մի նոր, աւելի բարձր կեանք ստեղծելու։ այդ կեանքում չպէտք է արտայայտուեն մարդկային բնազդներն ու կրքերը։ արտաքին աշխարհի այն բոլոր երևոյթնե-

ըր, որոնք հաճոյալից գրգիռներ են պատճառում։ մեր զգայարաններին, պէտք է վատարուած լինեն այդ կեանքից։ այնտեղ միայն հոգին, և միտքն են խոյանալու դէպի ճշմարտութիւնը, դէպի Աստուած։ Վանահայրը գաղափարով է յափշտակուած։ նա մարմնացումն է, յափտենական ճշմարտութիւնները, որոնսող մտքի, հաջիսատանքի, ներքին, անդուլ ու անկաշկանք։ որոնմանը ներքին անվերջ նուաճումների բարձունքէ, բարձունք, պարսպէ պարիսպ, անդադար խոյանք մը դէպի վերինը, տաժանակիր աշխատանք դէպի ճշմարտութիւնը։ Վանահօր ծրագրած կեանքի բովանդակութիւնը պէտք է կազմէ երեք բան։ նախ բանականութիւնն, որպէս հիմք այդ կեանքի, երկրորդ՝ կամք, որ այդ կեանքը պէտք է պաշտպանէ հաճոյառիթ փորձութիւնների գէմն և երրորդ՝ հաւատու, որ իրը կամար պէտք է ծածկէ այդ կեանքը, որպէս լաւագոյն, կատարեալ կազմակերպութեան։ Զգայական սիրոյ գաղափարը օտար է Վանահօրը։ բացի աղօթքից, երկնայինից և իւր հոգեկան մտորումներից նա չէ ընդունում որ իրէ ոչինչ նա ցանկանում է հոգեկան նուաճումներ անել բարձունքէ բարձունք, բայց այդ միայն գաղափարական։ մզումներից գրդուած, առանց սրտի և զգացումների մասնակցութեան։ Վանահայր հրաժարվում է մի կնոջից, որ 25 տարի շարունակ նրա երազների, առարկան է եղել, («ինչ կուզես, կին, ինչ կուզես դուն, ինծմէ, բացականչում է Վանահայրը։ ամբողջ կեանքիս կէպը տապապանք, ու դառնութիւն, ջարդեցիր կեանքս, խորտակեցիր երիտասարդութիւնս, հիմա ալ մոխիրը քըքըել կուզես»...) հրաժարվում է սիրած գործից և համակուած գերագոյնի գաղափարով (թողնում է ստորոտը և բարձրանում է վեր, հոգու տաճարը կերտելու, դրին չէ համելու արտաքին և ոչ մի

յուղում Այսպիսով (վանահայրը, ներկայանում է որպէս քրիստոնէական իդէալի մարմնացումն), ապկետիզմը իբր էական համարելով։ Վանահայրը իւր գոյութեամբ գեռագոյն ճիշ է անում դէպի երկինք, մոռացութեան առաջի աշխարհն ու աշխարհայինը՝ նրա համար կեանքը տառապանքի մի հովիտ է, որի վախճանն է ցանկալի։ Եկեանքը խաչ մըն է, որ պիտի կրենք մերուսին, մինչեւ Տէրը կանչէ մեղիք ահա Վանահօր հայեացքը կեանքի վրայ։ Կեանքի ու աշխարհի բոլոր արժեքները տեսական չեն, այլ վաղանցուկ, նա ձգում է յաերթականին, որ երկնքումն է, ուրեմն պէտք է դէպի երկինք դարձնել հայեացքը և աշխարհի հետ բոլոր կապերը խզել, երկիրը և կեանքը մոռնալ. կին է կեանքի իմասնոր և աշխարհի ամենահզօր գործոնը։ Կա քաղցրացնում է կեանքը նա ծնունդ է, Կա աշխարհիկ վայելքներին տոն տուողն է եւ կին է, որից ամենից շատ վախենում են ասկէտները ու արհամարում նրան. «Կին, մեղանչանք» է քու անունդ, կեղծիք է քու հոգիդ և զգայարանքները քու աշխարհըդ», առում է Անահայր. նա մերցնում է մարմինը իւր պահանջներով և միայն հոգին է զօրեղացնում. երկինք տանող ճանապարհը պահանջում է ուժեղ հոգի և թոյլ մարմին... «Հոս կըքել չկան, հոս բնազդներ չկան, հոս սուրբ հոգին է միայն, հոս միտքն է միայն, վեր խոյացող միաքը դէպի ճշմարտութիւնը, դէպի Աստուած»... Այս իսկական միջնադարն է, «հազարամեակ մը մեզմէ առաջ», երբ հակառակ հեթանոսական շրջանի առողջ, ամուր մարմնի պաշտամունքին (յիշել անտիկ գեղարուեստը, մասնաւորապէս Հերկուլէսի արձանը՝ յաղթանդամ մարթով և փոքր գլխով), պաշտօնական քրիստոնէութիւնը եկաւ. հալածելու հեթանոս միտքը, արուելու բնութեան հիասքանչ կերտուածքը՝ մարդու մար-

մինչը, պակելու աշքերը քնութեան առջև և միայն ոռա  
միտքը անհամաշխափարեն. զարդացնելու, (միշ-  
գին ու միտքը անհամաշխափարեն. զարդացնելու, (միշ-  
նաղարեան նկարիչների գործերը) անբնական մեծագը-  
լուի, լայն ճակատ, խոշնի աշքեր և պիտքը, այլընկա-  
կուած ծուռ մարմին): առաջ անձնաւուն առաջ անձնաւուն  
կուած ծուռ մարմին): առաջ անձնաւուն առաջ անձնաւուն

Դրամայի երգորդ խոցոր դէքը Աթողաս, սար-  
հակ է միանգամայն Վանահօրը: Փոքրուց այս վանա-  
կանը կղել է Վանահօր ձեռքի տակ և իւր հոգու թոփշ-  
կանը շատ անգամ մխթիարել է, դաստիարակին: Արեւ-  
քով շատ անգամ մխթիարել է, դաստիարակին: Սիրում են  
դան բարի է, մաքուր, համեստ, սուրբ... Սիրում են  
նրան վանականները: Վանահայրը նրան է ընտրել

իւր գործը շարունակող՝ Մի օր Աբեղան ծովի մէջ գրկում է Սեդային, Խշանի, աղջկան, ճաշակում է պայքարի քաղցրութիւնը և այսուհետեւ անզօր է դիմադրել նոր ներքին մղիչութիւն, որ անդադար ձայնում է. «Ժամանակն է, թող վանական անխմաստ կեանքը և նետրւեր կեանքի փոթորիկը, Սեդայի փիրկը»: Քնած միջնցին իրազներն են նրան ատիպում այդքայլն անել. իսկ աղթուն միջոցին, այդ երազների մտապատճերներն են Սեդայի յիշաւուկը, Միգանուց ները, և հովիկները շայում են նրանոր զգացումը, Սեդան երազներով լեցնում է ուսայնութեան փոսը, բովանդակութիւն է տալիս կեանքին, գոյութեան, աէր է խոստանում. Վահագնի պաշտամունքը գործում է նրան ենը, ուժի, ծովի յաղթութեան հրապոյներով արքեցնում է նրան և ահա Աբեղան բաժանվում է Վանահօրից, գնում է իրական արևին երկրպագելու, կեանքի կրիւը և վայելքը ճաշակելու, իւր բոլոր ունակութիւնները գործադրելու, ազատութեան մէջ թեւերը թափահարելու: Աբեղայի սիրտը թեւեր է ստանում և կնոջ գիրին է նետվում, մեծագոյն ստեղծագործութեան, կեանքի յարատեռութեան համար: Աբեղան հեռանում է անապատից և վանական միալար կենցաղից, որ անգործութեան, վախի ու մեւելութեան զուգորդումն է, բաժանվում է վանականներից և իրեն նետում է կեանքի ծովը, ուր «յոյզ կայ ու շարժում»: Աբեղան գնում է մանուկ մարդկութեանը ծառայելու: Մնացած տիպերը երկրորդական են մնան ծառայում են որպէս պարզաբանութիւն դրամայի համապոյների: Նշանաւոր են Շանթի գծագրած վանականների գէմքերը: Վանականներն այն ֆօնն են, որի մէջ զարգանում է Վանահօր և Աբեղայի անելիքը. թէ Վանահայրը և թէ Աբեղան դժգոհ են իրանց վանականներից և երկուսն

# Հայոց պատմություն

45

էլ անջատվում են նրանցից, բայց հեռանում են աղավա-  
մագծօրէն հակառակ ուղիներով, Վանականները նիւ-  
թապաշտ և մռայլ են, դրամայում ներկայանում են  
որպէս մի անդիտակից խուժան, մոռթամբոխ, որին  
մղորեցրել է Վանահայրը: Նրանք եկել են Վանահօր  
մօտ, թողել են կեանքը առանց համզման ու հաւա-  
տի, կեանքի կովում անընդունակ գոյութիւնը պահե-  
լու, նրանք հաւաքվել են կղզի հանգիստ ապրելու,  
կեանքի «ձախորդութիւններից, տաժանակիր աշխա-  
տանքից» հեռու, իշխանը հոգում է նրանց օրուայ-  
տանքից: Նրանք սպասում են կայթակղեցնել  
վանականները կուշտ են և աղօթում են, հե-  
պարէնը վանականները սերտորէն կապուած են  
տեսլով Վանահօրը: Նրանք սերտորէն կապուած են  
կեանքին, չեն մոռացել աշխարհը: Նրանք ընդունում  
են սատանայի գոյութիւնը և վախենում են դրանից: Սատանան  
երևում է երբեմն նրանց և գայթակղեցնել  
է ցանկանում վանականներին, երևում է կողջ կեր-  
պարանքով, մկիտանջու և այլն: Խաչակնքում են և  
չար ոգին անյայտանում է: Մէկի մտքից սատանան  
գողանում է Տիրամօր անունը, խեղճը փնտռում է,  
կարչարվում, կարծեն լեզուի ծայրին է, բայց չի կա-  
րողանում արտասանել «սուրբ կոյս Մարիամ»...  
Նրանք միիթարում են իրենց նրանով, թէ անսապատ  
եկողը եկել է փորձուելու սատանայէն... Այս վանա-  
կանների մէջ կան բնախօսական պահանջներ: Մերու-  
նի վանականի բերանով նրանք ասում են, որ իրենք  
էլ մարդ են և որ ոչինչ մարդկային նրանց համար  
օտար չէ: Անգիտակից և յաւիտենականի որոնումնե-  
րին անընդունակ և ծոյլ այս ամբոխը, որ չըւնի և իւր  
ուրին անընդունակ և ծոյլ այս ամբոխը, որ չըւնի և իւր

Էլ Աևանը լիքն է այդպիսի տիպերով։ Մառացի նմանութեամբ առաջ կատարում է առաջին գործը տարբերվում է միւս ներից։ առ ճաշակել է կեանքի վայելքները, մեղանչել է և, որպէս պատիթ փրեն, իւր աչքերն է հանել, այլիս չը տեսնելու գայթակղութիւնը։ նա կատարել է քրիստոնէութեան Աստուծոյ պատուէրը։ «այն անդամը, որ քեզի կը գայթակղեցնէ, կտրէ ու դուրս նետէ քեզմէ», կոյրը եկել է վանք ապաշխարհելու, մինչդեռ միւս վանականները եկել են հանգիստ և կուշտ ապրելու համար։ Կոյրը ցանկանաւմ է Վանահօր հետ վեր բարձրանալ և ճգնել, բայց Արեղայի օրինակը նրան էլ է վարակում և մի գաղտնի ճայն ասում է նրան, «իդուր հանեցիր աչքերդ»։ Ինչ է լինում կոյրի հետ-գրաման մեզ չէ ասում։

Իշխանուհին եւ իշխանը հետաքրքիր են, որպէս աշխարհիկ կեանքի կրոններ։ Իշխանուհին դեռ օրիորդ ժամանակ արքունիքում մտերմացել է այժմեան Վանահօր, նախկին Յովհաննէսի հետ և ուժիղ սէր է զգացել զէպի նա, բայց ամուսնացել է մէկ ուրիշի հետ։ Երբ ամուսինը մնենում է, իշխանուհին գալիս է Վանահօր մօտ, Աևանին մօտիկ Ցամաքաբերդում հաստակում է, անցել է 25 տարի։ բայց իշխանուհին էլի շարունակում է սիրել իւր Յովհաննէսին։ նա ուղախ է այն գիտակցութեամբ, որ իրեն մօտիկ գտնվում է իւր սիրելին, նրա հետ իշխանուհին եկեղեցի է կանգնեցնուում Աևանայ կզկում, մատածելով, որ Աստծոյ այդ տաճարը իրենց միջի սիրոյ նշանն է լինելու, «որովհետև Աստուած ինքը սէր է»։ Իշխանուհին կանացի սեթելթի ու սէր չէ տածնում զէպի Վանահայրը։ հեղասակութիւնը այստեղ մաս չունի։ հոգեկան է իշխանուհին սէրը և իւր արժանագայել գուպութիւնը։

Վանահօր անտարբերութիւնը նրան նետի պէս վիրաց գորում է, իշխանուհին կամքի ոյժ է ունենում, հեռացնելու իրեն մօտից։ Վանահօրը և մենակնիթեան մէջ անցկացնելու իւր օրերը, փոխանակ պնապարբերութիւն սառ պատասխանները լսելու։

Իշխանը բնորոշելու համար շատ քիչ բան ունինք. նա կեանքի մարդ է, շատ գործ և զբաղաւմ ունի. երբէք տկար չէ եղել թշնամիների դէմ և երբէք էլ անարդար գործ չէ արել կեանքը նրա կաշծիքով մի խաղ է բարիքները փոռուած են և յանդուան եղողինն է աշխարհը. «ով ինչ վերցնաց, վերցուց»։ նա գիտէ գնահատել անձնաղուութիւնը, և Արեղային առաջարկում է իւր սուրբ, նժոյգը և աղջկան... Իշխանը, ուրեմն, աշխարհիկ կեանքի, կոուի, ուժի ջատագովն է, Միջնադարի մտածութեամբ և ըմբռնուաներով դեռ ևս հեթանոս իշխանը...»

Այսպիսով մենք վերլուծեցինք դրաման և աշխատեցինք գործող անձանց բնութագիրը տալ։ Այս պատմածով գոռուար է լիակատար գաղափար կազմել դրամայի մասին. պէտք է ընթերցողը ինքը կարդա զիրքը։ Քիչ է կարդալը, պէտք է տեսնի ներկայացումը։ «Հին Աստուածները» մի հանճարեղ երկ է, որ երբ և իցէ հայ թատրոնը ունեցել է։ Շանթի նոր դքաման հայ թատերական գրականութեան իսկական գլուխ գործոց է, և արձէ նրա վրայ հրառւիրել հասարակութեան ուշադրութիւնը։ Գեղարուեստական մի հոյակապ գործ է, որ ընթերցողին և հանգիստանուին գեղարուեստական մեծ հաճոյք է պատճառում։ Առողջ մարդը ցնցումների մի ամբողջ շարք է ապրում «Հին Աստուածների» ներկայացումը տեսնելիս։ տեղ կարծես պաղ սառուուը ճեղքում է ձեր մարմինը և երեմն թվում է, թէ ձեր գլխի մազերը պոկուեցին իրենց արմատներից և

Նրանց տեղը պառ օղը բռնեց... Այսպէս է այն տպաւորութիւնը; որ ունենում էք զրամայի ներկայացումը դիտելիս: Միայն գեղարուեստական հաճոյքը չէ այստեղ. մտածելու էլ շատ էան է տալիս երկը, հեղինակի հարուցած խնդիրները շատ կարերը են և վերաբերվում են բոլոր մարդկանց: Խնանթ՝ ներկայացրել է օրյեկտիւ տուեալներ, վարպետորէն՝ ճիշտ նկարագրել է մարդու բարդ հոգեբանութիւնը, տուել է՝ մտածելու մեծ նիւթ:

Պէտք է կարդալ Շանթի գրքերը և մտածել նրա հարուցած խնդիրների մասին: Երբ միենոյն խնդրով շատերն են զրայվում՝ աւելի վստանութիւն կայ, որ այս կամ այս խնդիրը կստանայ որոշ լուծումն, անհասկանալի երեսները կը հասկացուին, մարդկային հոգու գաղտնի խոռոչները կը պարզուին և այդպիսով կը հեշտանայ լուսաւոր ապագայի համար պատրաստուելը: Հին սերունդները իրենց հերթին շատ են տքնել լուսաւոր ապագայի համար և մեզ են յանձնել՝ շարունակելու: Մենք ևս աշխատելու ենք այդ ուղղութեամբ, փորձելու ենք ներդաշնակութիւնն մտցնել գաղափարական ձգտումների և անձնական վայելչասիրութեան մէջ, չը բաժանել մեր սիրտը՝ հոգուց և հանրօգուտ, հասարակութեան համար օգտակար գործունէութեան դիմենք, աչքից չը կորցնելով վարդագոյն հորիզոնները...

1918 թ. մարտ, Կարս.

Կայացրել է՝ 2 անգամ Երևան, 2 Ալէքսանդրապոլի Դարս: Սըմենեանի խմբի մասին աեղեկութիւններ չունենք:

ԳՐԱԿԱՆ ԴԱՏԵՐ. Թիֆլիսում, 3 փետր. խօսել են Ա. Յարութիւնեան; Մ. Մատենացեան, Ստ. Լիսիցեան, և Գ. Իինեկեան: «Հնատից» յետոյ 7 փետր. խօսել են Գ. Իինեկեան, Աթանասիան, Տ. Յովհաննիսեան, Ատ. Լիսիցեան, Վաղարշեան, Դիմիրչեան, Ղազարեան, Խոստիկեան, Սըլովեան, Աղբալեան, Մատենացեան, Համբարձումեան, Էկո և թթ. Մինասեան: Ծիգ. Սազարեանի ալայն. 11 յունի, տիկ. Ծ. Խանազատ զեկուցել է, խօսել են Քալանթար, Աթանասիան, Արմենեան, Արեւելեան, Նազարէթեան. Է՛ր յունի. Քալանթար, Իփեկեան, Համբարձումեան, Բենիկ վարդապետ, Գ. Վարդանեան, Ֆէտվաճեան, Եգէկեան և ուղիշներ: Բարգվում 28 փետր. խօսել են Ս. Յակոբեան, Խանազատեան, Խօջամիրեան, Տէր-Դէսորգեան. 2 մարտի. զրուցադրութիւն. Ա. Գարուիլեան, Վարդանեան, Տէր-Դանիկեան, Ներսիսեան, Աթարեկեան, Մալիսագեան, Բէզգաղեան և ԿարաՊուրզ:

### ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆՆԵՐ.

Ա. Յարութիւնեան—յունվարի 26, Թիֆլիսում:

Հ. Ցովհաննիսեան—մարտի 8, պուտերէն, Թիֆլ.

Ա. Մալխատեան—փետր. 24, Բագու, ոռուերէն.

Գ. Իփէկեան—մարտի 28, Բագու.

Գ. Էղիլեան—փետր. 17, Եջմիածնում.

Նոյն՝ մարտի 23, Երևան.

Գ. Տէր-Ռուբենեան—մարտի 17-ին Կարսում և շրջանի մի քանի գիշերում.

Տիկ. Ծ. Խանազատ—ապրիլի 16, Ալէքսանդրապոլի

կ. Պօլսում՝ Ասուլիս (գրական գատ) խօսել են:

Գ. Խաժակ, Յ. Սիրունի, Տիգ. Զէօֆիրեան, Մար. Բաբուսեան, Դանիէլ Վարուժան, Ռուբէն Զարդարեան և Գրիգոր Զոհքար:



NL0264708

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆ

68.003

